ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԵԲ ԿԱՅՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07

ք. Երևան

07 հունիսի 2019թ.

ՀՀ անշարժ գույքի կադատրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Գ. Գրիգորյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Գադուկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի պաշտոնական վեբ կայքի ստեղծման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1320000 (մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղար——————Գ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ
Հասցե: Վարդանանց 7, բն. 43
Գործ. հասցե՝ Հ.Հակոբյան 3/18, 5-րդ հարկ
ՀՎՀՀ N 02708407
Հ/Հ N 2050022375301001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

տնօրեն——————Գ. Գաղուկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհ. քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	72211137/501		դրամ	1320000	1	ք. Երևան, Արշակունյաց 7	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 4 ամսյա ժամկետում

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԵԲ ԿԱՅՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Կայքի նշանակությունը

Կայքը ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պաշտոնական կայքն է, որի նպատակը հասարակության առավել լայն շերտերին Կոմիտեի գործունեությանը ծանոթացնելն է, ինչպես նաև առցանց ծառայություններ մատակարարելը:

Կայքի նկարագրությունը

Կայքը եռալեզու է, հայերեն՝ հիմնական, ռուսերեն, անգլերեն, որի միջոցով քաղաքացիները հնարավորություն կունենան ծանոթանալու Կոմիտեի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին, Կոմիտեի կատարած և կատարվող աշխատանքներին, ստանալու իրենց հուզող հարցերի պատասխանները և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ Կոմիտեի աշխատակիցները, կայքում ունենալով հատուկ հարթակ, կկարողանան ոչ միայն հեշտությամբ կատարել իրենց աշխատանքը, այլև հարկ եղած դեպքում մեկնաբանություն թողնել՝ այդպիսով բարելավելով Կոմիտեի գործունեությունը:

Կայքը պետք է բավարարի 26 դեկտեմբերի 2013 թվականի N 1521-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված նվազագույն պահանջներին:

Կայքի բովանդակությունը

Կայքի բովանդակությունը ներառելու է.

- Կոմիտեի ստեղծման պատմությունը, կառուցվածքը և գրաֆիկական պատկերը, հիմնական խնդիրներն ու գործառույթները, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, իրենց ենթակայությամբ գործող մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, ղեկավար կազմի կամ տեղեկատուի հեռախոսահամարները

- Բարձաստիճան պաշտոնատար անձանց, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների անունները, ազգանունները, պաշտոնները, կենսագրությունները, էլեկտրոնային փոստի հասցեները և իրավասությունների նկարագրերը
- Այն իրավական ակտերը կամ դրանց կատարվող հղումները, որոնցով կարգավորվում է Կոմիտեի գործունեությունը, որոնք ընդունվել են Կոմիտեի կողմից կամ վերաբերում են Կոմիտեին
- Կոմիտե ներկայացվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դիմումների, տեղեկատվություն ստանալու մասին հարցումների և այլ փաստաթղթերի օրինակելի ձևերը, դրանց լրացման վերաբերյալ ցուցումները, ինչպես նաև պաշտոնատար անձանց գործողությունների վարչական և քրեական կարգով վիճարկման կարգը
- Կոմիտեի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, զեկույցներ և այլ տեղեկատվական հոդվածներ
- Տվյալ տարում Կոմիտեի գործունեության ապահովման համար հատկացված բյուջետային միջոցների ընդհանուր գումարի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարողականի մասին տեղեկատվությունը
- Կոմիտեում գործող տվյալների շտեմարանների, ռեգիստրների և ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգերից, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող տեղեկատվական ռեսուրսների ու ծառայությունների ցանկը և դրանից օգտվելու հրահանգները
- Հայտարարություններ, այդ թվում նաև թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկատվությունը՝ թափուր պաշտոնների ցանկը, դրանց ներկայացվող պահանջները, աշխատանքի ընդունման կարգը, մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը կամ հղումը համապատասխան մարմնի պաշտոնական կայքին
- Պաշտոնական միջոցառումների (նիստեր, ընդունելություններ, մամուլի ասուլիսներ, և այլն) մասին տեղեկատվությունը, ինչպես նաև պաշտոնական միջոցառումների ժամանակ ընդունված որոշումները
- Կոմիտեի պաշտոնատար անձանց և պաշտոնական պատվիրակությունների այցերի և աշխատանքային գործուղումների մասին տեղեկատվությունը՝ համապատասխան մարմնի ղեկավարի թույլտվությամբ, պաշտոնական հայտարարությունների և ելույթների տեքստերը, որոնք հրապարակվում են Կոմիտեի կողմից
- Կոմիտեի կողմից կազմակերպվող դասընթացներն ու վերապատրաստումները
- Կոմիտեի կողմից միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համագործակցության, ինչպես նաև միջազգային պայմանագրերի մասին տեղեկատվությունը
- Ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների, տեղեկատվություն ստանալու մասին հարցումների վերլուծությունը Քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը, ինչպես նաև հերթագրման առցանց հնարավորությունը
- «Կայքը պետք է ինտեգրվի գործող հերթագրման համակարգի հետ, համապատասան API-ը կտրամադրվի Պատվիրատուի կողմից».
- Կոմիտեի կոնտակտային տվյալները՝ փոստի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, հեռախոսահամարները, և առցանց նամակ ստանալու հնարավորությունը
- Կոմիտեի ստորաբաժանումների և սպասարկման գրասենյակների հասցեների քարտեզային պատկերը

Կայքի կառուցվածքը

Կայքն ունենալու է փաստաթղթին կից գծապատկերում ներկայացված կառուցվածքը: Այն բաղկացած է լինելու 2 հիմնական մասերից, որոնք պայմանականորեն դասակարգվելու են տառային և թվային համարակալություններով:

- Տառային (A-D) դասակարգումը ներառելու է հետևյալ բաժինները
  - A. Գործունեություն՝ հիմնականում բաղկացած է լինելու նկարագրական հատվածներից՝ մատնանշելով Կոմիտեի գործառույթները
  - B. Ծառայություններ՝ լինելու է առցանց ծառայությունների համար նախատեսված հարթակ, որտեղ քաղաքացին կկարողանա կատարել գրեթե ցանկացած կադաստրային գործարք (Այս փուլում նախատեսվում է հղում գործող www.e-cadastre.am կայքին)
  - C. Նորություններ՝ պարբերաբար թարմացվող բաժին, որտեղ լուսաբանվելու է Կոմիտեի գործունեությունը
  - D. Կապ մեզ հետ՝ բաժին, որի միջոցով քաղաքացին կկարողանա գտնել իրեն հուզող հարցերի պատասխանը, իսկ հակառակ դեպքում կապ հաստատել աշխատակիցների հետ
- Թվային (1-7) դասակարգումը ներառելու է հետևյալ բաժինները.

1. Մեր մասին - բաժնում տեղեկատվություն է լինելու Կոմիտեի պատմության, կանոնադրության, ինչպես նաև աշխատակազմի մասին
2. Հայտարարություններ՝ բաժնում հիմնականում լինելու են թափուր աշխատատեղերի, գնումների և նմանօրինակ գործառույթների վերաբերյալ հայտարարություններ
3. Որակավորումներ՝ բաժնում հիմնականում լինելու է չափագրողների և գնահատողների որակավորման, ինչպես նաև օպերատորների և ռեգիստրների վերապատրաստման վերաբերյալ տեղեկատվություն
4. Իրավական ակտեր՝ բաժնում հիմնականում լինելու են կառավարության որոշումներ, օրենքներ, նախագծեր, հրամաններ և այլն
5. Գրադարան՝ բաժնում հիմնականում լինելու են անշարժ գույքի շուկայի վերլուծությունների և մշտադիտարկումների վերաբերյալ տեղեկատվություն, թարգմանություններ, հաշվետվություններ և այլն
6. Ընթացիկ ծրագրեր՝ բաժնում լինելու է տեղեկատվություն Կոմիտեի՝ իրականացման փուլում գտնվող ծրագրերի մասին
7. Միջազգային գործունեություն՝ բաժնում հիմնականում տեղեկատվություն է լինելու Կոմիտեիմիջազգային և տեղական կազմակերպությունների հետ համագործակցության, ինչպես նաև միջազգային պայմանագրերի մասին

- Գլխավոր էջը, վերոնշյալ երկու մասից բացի, ներառելու է նաև «Բարեփոխումներ» և «Մուտք անձնական էլեկտրոնային էջ» բաժինները
- Գծապատկերում *-ով առանձնացված բաժինները նախատեսված են միայն աշխատակիցների համար
- Գծապատկերում #-ով առանձնացված բաժինները նախատեսում են ունենալ տեղադիրքային քարտեզներ
- Գծապատկերում կանաչ գույնով նշված բաժինները ունենալու են հիմնականում գրադարանային բնույթ, իսկ կապույտ մասով առանձնացված հատվածները՝ տեքստային

Արտաքին տեսք

Կայքը ունենալու է հիմնական էջ, որտեղ նախատեսվում է.

- Տեղադրել ինչպես ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ՀՀ պետական խորհրդանիշները, այնպես էլ Կոմիտեի տարբերանշանը
- Գլխավոր էջից հղում դեպի «Բարեփոխումներ» բաժին
- Ունենալ «Մուտք անձնական էլեկտրոնային էջ» կոճակ, որը հասանելի կլինի աշխատակիցներին՝ որպես աշխատանքային հարթակ

- Ունենալ «Փնտրել» կոճակ, որը հնարավորություն կտա որոնման արդյունքների էջից զատ՝ առաջարկվող ցուցակի միջոցով, նախատեսված հերթականությամբ տեսնելու հայցված տեղեկատվությունը
- Ունենալ հղումներ կայքի սոցիալական էջերին
- Ունենալ կայքի լեզուն փոխելու համար նախատեսված կոճակ՝ եռալեզու, հաշվի առնելով որ կայքի աշխատանքային լեզուն լինելու է հայերենը և որոշ դեպքերում հնարավոր է որ այլ լեզուներով թարմացումներ չլինեն

Կայքի էջկապը պետք է կատարվի համապատասխան W3C (Դաբլյու3Սի) ստանդարտներին:

Կայքը պետք է նախագծված և պատրաստված լինի հիմնվելով ադապտիվ դիզայնի վրա՝ ապահովելով առավելագույն հարմարավետ աշխատանք ինչպես համակարգիչների, այնպես էլ մոբայլ սարքերի (հեռախոսներ և տաբլեթներ) վրա:

Ներկայացվող տեխնիկական պահանջները

Կայքի տեխնիկական իրագործումը պետք է իրականացվի օգտագործելով բաց կոդով տեխնոլոգիաները: Այն պետք է ապահովի համապատասխանելիություն տարբեր օպերացիոն համակարգերում աշխատելիս՝ օպտիմիզացված լինելով Linux (Լինուքս) միջուկով կամ այլ UNIX (ՅՈՒՆԻՔՍ) համատեղելի օպերացիոն համակարգերի ընտանիքում աշխատող Apache/nginx (Ապաչ/էնջինիկս) վեբ սերվերների համար:

Հարթակը պետք է ապահովի առավելագույն համապատասխանելիություն գոյություն ունեցող հիմնական տարածված զննման ծրագրային փաթեթների հետ, ինչպիսիք են Internet Explorer (Ինտերնետ էքսպլորեր) (>= v10), Mozilla Firefox (Մոզիլլա Ֆայրֆոքս), Opera (Օպերա), Safari (Սաֆարի), Chrome (Քրոմ) և այլն:

Կայքի և դրա բովանդակության կառավարման համակարգի մշակման համար չպետք է օգտագործված լինեն բաց կոդով հանրորեն հասանելի CMS (ՍիԷմԷս) համակարգեր, ինչպիսին են Wordpress (Վորդպրես), Drupal (Դրուպալ), Joomla (Ջումլա) և այլն:

Համաշխարհային որոնման համակարգերից այցելություններ ապահովելու համար, կայքը տեխնիկապես այդ համակարգերին հնարավորություն պետք է ընձեռի առավելագույնս «խորը» ինդեքսացնելու կայքում զետեղված ինֆորմացիան՝ օգտագործելով SEF (ՍիԷֆ) հասցեներ:

Բովադակության կառավարման համակարգ

Կայքի բովանդակության կառավարման համակարգը (ԲԿՀ) պետք է հնարավորություն ընձեռի կայքի ադմինիստրատորներին ղեկավարել կայքի բովանդակությունը, մասնավորապես համալրել էջերի բովանդակությունը և ստեղծել նոր բաժիններ օգտագործելով միայն վեբ զննարկիչ, չունենալով հատուկ տեխնիկական գիտելիքներ:

ԲԿՀ-ն պետք է գրանցի (լոգավորի) ցանկացած ադմինիստրատորի կողմից կատարված գործողության տեսակը և ժամը, հետագայում կարիքի դեպքում դրանց վերլուծման համար:

Համակարգը պետք է օժտված լինի օգտվողների և դրանց խմբերի իրավասությունների տրման և սահմանափակման ճկուն մեխանիզմով:

Թեստավորում և ներդրում

Կատարողը պետք է իրականացնի կայքի համալիր, ինչպես նաև ամեն փուլի արդյունքների թեստավորումը և թեստավորման ընթացքում հայտնաբերված թերությունների վերացումը:

Գործող կայքից նոր կայք բովանդակության տեղափոխումը հանդիսանում է Կատարողի պարտականությունը:

Մինչ կայքի ներդրումը կատարողը պետք է իրականացնի պատվիրատուի համապատասխան անձնակազմի ուսուցումը:

Սպասարկում

Կատարողը աշխատանքների հանձնում-ընդունում իրականացնելուց հետո պետք է 12 ամսվա ընթացքում իրականացնի կայքի երաշխիքային սպասարկումը, ինչպես նաև երաշխիքային ժամանակաշրջանի ավարտից հետո կատարի կայքի ետերաշխիքային 24 ամսվա սպասարկում:

Երաշխիքային և ետերաշխիքային սպասարկումը չի ներառում լրամշակման աշխատանքները: Սպասարկման աշխատանքները միտված են ապահովելու կայքի բնականոն աշխատանքը՝ համապատասխան ներկայացված տեխնիկական բնութագրի:
Պատվիրատուն կբացառի իր կողմից ապարատային և փոխկապակցված սարքավորումների անփույթ, անզգույշ կամ ոչ պատշաճ օգտագործումը, ինչպես նաև Կայքում փոփոխությունները կամ Կայքին համակցված այլ ենթակառուցվածքների փոփոխությունները, որոնք կարող են փոխել Կայքի վարքագիծը՝ առանց Կատարողի հետ նախնական գրավոր համաձայնության:

Պահանջվող որակավորում

· Կայքը մշակող ընկերությունը պետք է ունենա առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ SS ոլորտում և նմանատիպ պայմանագրերի կատարման փորձառնություն:
Նմանատիպ են համարվում պետական գերատեսչությունների կայքերի մշակումը, էլեկտրոնային կառավարման ոլորտի համար համակարգչային ծրագրավորման ծառայությունների մատուցումը, տվյալների բազաների մշակումը բաց կոդով տեխնոլոգիաների միջոցով:
· Ծանրաբեռնված վեբ կայքերի զարգացման փորձ (մինչեւ 100 000 օգտագործող / օրական)
· Թվային էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ համակարգերի մշակման փորձ
· Պետական կազմակերպությունների հետ համագործակցության փորձ
· Առնվազն 1 միջազգային հաճախորդների պորտֆոլիո

Անհրաժեշտ մասնագետների առկայություն

·Նախագծերի ղեկավար - 1 հոգի - 3 տարի (Պետական գերատեսչությունների կայքերի մշակման, էլեկտրոնային կառավարման ոլորտի համար համակարգչային ծրագրավորման նախագծերի ղեկավարում)
·Ծրագրավորման թիմի ղեկավար - 1 հոգի - 3 տարի (Պետական գերատեսչությունների կայքերի, էլեկտրոնային կառավարման համակարգերի, տվյալների բազաների մշակում բաց կոդով տեխնոլոգիաների միջոցով: Ծրագրավորման թիմի ղեկավարում):
· Դիմային մասի ծրագրավորող (front end developer) - 2 հոգի - 2 տարի (Կայքերի և կառավարման համակարգերի դիմային մասերի ծրագրավորում:)
· Սերվերային մասին ծրագրավորող (back end developer) - 3 հոգի - 2 տարի (Կայքերի և կառավարման համակարգերի, տվյալների բազաների մշակում բաց կոդով տեխնոլոգիաների միջոցով:)
· UI/UX դիզայներ - 1 հոգի-3 տարի- Կայքերի (ներառյալ մոբայլ) ինտերֆեյսների նախագծում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԳ կադաստրի կոմիտե	«Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	Հասցե: Վարդանանց 7, բն. 43
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Գործ. հասցե՝ Հ.Հակոբյան 3/18, 5-րդ հարկ
Հ/Հ 900013220026	ՀՎՀՀ N 02708407
ՀՎՀՀ 02534328	Հ/Հ N 2050022375301001
	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Գլխավոր	
բարտուղար----------Գ. Գրիգորյան	տնօրեն----------Գ. Գաղուկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
ՀՀ ԱԳԿԿ-ԳՀԾՁԲ-19/07 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն